ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի N 74-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018 թվականի մարտի 26-ի *«Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովների ձևավորման և գործունեության աշխատակարգը հաստատելու մասին»* N 74-Ա որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

**2019 թվականի մարտի 14**
**ք. Հրազդան**
**N 56-Ա**

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՐԱԶԴԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 56-Ա ՈՐՈՇՄԱՆ

«ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի N 74-Ա ՈՐՈՇՄԱՆ

ԿԱԶՄ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ (ՀԱՏՈՒԿ) ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԿԱՄ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՂԵԳՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

1. *Հրազդանի տարածաշրջան*

1) ***Վահագն Ոսկանյան*** - հանձնաժողովի նախագահ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ,

2) ***Հովհաննես Հակոբյան*** - հանձնաժողովի քարտուղար՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի հիվանդանոցային ծառայության գծով տեղակալ,

3) ***Լիլիա Կարապետյան*** - անդամ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն,

4) ***Կարինե Հարությունյան*** - անդամ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի առաջին կարգի մասնագետ,

5) Տվյալ տարածքը սպասարկող ամբուլատոր-պոլիկլինիկական առողջապահական ընկերության տնօրեն կամ բժիշկ *(համաձայնությամբ)*,

6) Տվյալ մասնագիտության գծով ստացիոնար բուժօգնություն իրականացնող բժիշկ *(համաձայնությամբ)*:

2. *Աբովյանի տարածաշրջան*

1) ***Ելենա Լյուլինա*** - հանձնաժողովի նախագահ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ,

2) ***Մարինե Բաբայան*** - հանձնաժողովի քարտուղար՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ընտանեկան բժիշկ, տարածաշրջանի պատասխանատու մանկաբույժ,

3) ***Վարդան Մանուկյան*** - անդամ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն,

4) ***Սոս Ալոյան*** - անդամ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի Աբովյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության առաջատար մասնագետ *(գործակալության պետի պաշտոնակատար)*,

5) Տվյալ տարածքը սպասարկող ամբուլատոր-պոլիկլինիկական առողջապահական ընկերության տնօրեն կամ բժիշկ *(համաձայնությամբ)*,

6) Տվյալ մասնագիտության գծով ստացիոնար բուժօգնություն իրականացնող բժիշկ *(համաձայնությամբ)*։

3. *<u>Չարենցավանի պարածաշրջան</u>*

1) ***Սիրելլա Առաքելյան*** - հանձնաժողովի նախագահ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ,

2) ***Վարդուհի Մարգարյան*** - հանձնաժողովի քարտուղար՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Չարենցավանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի արտահիվանդանոցային ծառայության գծով տեղակալ,

3) ***Գառնիկ Սահակյան*** - անդամ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Չարենցավանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն,

4) ***Լուսինե Ազիզյան*** - անդամ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի Չարենցավանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության առաջատար մասնագետ,

5) Տվյալ տարածքը սպասարկող ամբուլատոր-պոլիկլինիկական առողջապահական ընկերության տնօրեն կամ բժիշկ *(համաձայնությամբ)*,

6) Տվյալ մասնագիտության գծով ստացիոնար բուժօգնություն իրականացնող բժիշկ *(համաձայնությամբ)*։

4. *<u>Եղվարդի պարածաշրջան</u>*

1) ***Կարեն Հովսեփյան*** - հանձնաժողովի նախագահ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի առաջատար մասնագետ *(բաժնի պետի պաշտոնակատար)*,

2) ***Ասպրիկ Մարկոսյան*** - հանձնաժողովի քարտուղար՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բուժական գծով փոխտնօրեն,

3) ***Արմեն Նազարյան*** - անդամ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն,

4) ***Լիաննա Մկրտչյան*** - անդամ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի Եղվարդի սոցիալական աջակցության տարածքային գործակալության առաջատար մասնագետ,

5) Տվյալ տարածքը սպասարկող ամբուլատոր-պոլիկլինիկական առողջապահական ընկերության տնօրեն կամ բժիշկ *(համաձայնությամբ)*,

6) Տվյալ մասնագիտության գծով ստացիոնար բուժօգնություն իրականացնող բժիշկ *(համաձայնությամբ)*:»: